

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»
Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

2022թ.

30.11.2022

«Ամեն օր երեկոյան ժամը 20:00-ից կրակում են. ուրբաթ օրը ժամը 23:00-ին իրավիճակն ահավոր էր, ամբողջ ժողովուրդը դրսում էր». Կախակնի վարչական ղեկավար

Գեղարքունիքի մարզի սահմանամերձ գյուղերի ու հայկական դիրքերի ուղղությամբ թշնամու կրակոցները մշտական բնույթ են կրում:

168.am-ի հետ զրույցում **Կախակն գյուղի վարչական ղեկավար Աշոտ Վաթյանն** ասաց, որ ամեն երեկո թշնամին կրակում է և, ի տարբերություն Նախկինի, հիմա ծանր զինատեսակներից է կրակում:

«Ամեն օր երեկոյան ժամը 20:00-ից կրակում են, ուրբաթ օրը ժամը 23:00-ին իրավիճակն ահավոր էր, ամբողջ ժողովուրդը դրսում էր: Ամեն օր են այդ կրակոցները լինում: Կրակոցների թիրախում հատկապես հայկական դիրքերն են, դե, դիրքերն էլ մեզ շատ մոտ են, մերը՝ 1,5 կիլոմետր, իսկ իրենց դիրքերը՝ 2,5 կմ», - նշեց Կախակնի վարչական ղեկավարը:

Ըստ Աշոտ Վաթյանի, այս փուլում թշնամին նպատակ է հետապնդում վախի մթնոլորտ տարածել խաղաղ բնակչության շրջանում:

«Ժողովուրդը խուճապի ու անորոշության մեջ են, մի քանի ընտանիք գյուղից դուրս է եկել:

Երեկոյան ժամն են ընտրել կրակոցների համար, որովհետև լռություն է, ու կրակոցների ձայները բարձր են լսվում: Առավոտները որ կրակում են՝ գյուղը շարժի մեջ է, չի լսվում, բայց երեկոյան պարզ լսվում է:

Ի դեպ, թշնամին արդեն խոշոր տրամաչափով է կրակում, «մինամյոտ» են խփում, ուրբաթ ամբողջ երեկոյան դրանով էին խփում», - շեշտեց մեր զրուցակիցը:

Աշոտ Վաթյանի կարծիքով՝ ձյուն գալուց հետո հնարավոր է՝ թշնամին գյուղի վրա սադրանքները դադարեցնի, բայց դիրքերի ուղղությամբ սադրանքները կշարունակի, գյուղում ձյունը խորն է լինում:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին, ժամը 00:05-ի սահմաններում Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները, հրետանային միջոցների, ականանետների ու ԱԹՍ-ների կիրառմամբ՝ ինտենսիվ կրակ էին բացել հայ-ադրբեջանական սահմանի միանգամից մի քանի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Հարձակման հետևանքով հայկական կողմն ունի 200-ից ավելի զոհեր, վիրավորներ, անհետ կորածներ ու գերեվարվածներ: Այդ հարձակումից հետո ադրբեջանական կողմը գրեթե ամենօրյա ռեժիմով կրակում է հայկական դիրքերի ու խաղաղ բնակավայրերի ուղղությամբ:

<https://168.am/2022/11/30/1803890.html?fbclid=IwAR3XiKk2nyxmyPmSGF-HT5TrmbQ2SsWeE7UBIggC6RslLS7oGTH5YzbAEW0>

29.11.2022

Ցիանոբակտերիաներից ջուրը մաքրող մոդելային սարքի փորձարկումը Սևանա լճում դրական արդյունք է տվել

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժինը հայտնում է, որ ցիանոբակտերիաներից ջուրը մաքրող մոդելային սարքի փորձարկումը Սևանա լճում դրական արդյունք է տվել:

«Ջրի «ծաղկումը» ջրային էկոհամակարգերում կենսածին տարրերի առատության և նպաստավոր ջերմաստիճանային պայմաններում պլանկտոնային ջրիմուռների բուռն աճն է, որի արդյունքում վատանում է ջրի որակը: Խնդիրն առավել բարդանում է, երբ «ծաղկումն» առաջացնում են կապտականաչ ջրիմուռները՝ ցիանոբակտերիաները, որոնք ջրային միջավայր են արտանետում թունավոր նյութեր՝ սպառնալով մարդու և կենդանիների առողջությանը: Ջրիմուռների հսկայական կենսազանգվածը, որը ձևավորվում է կենսածին տարրերի առատության և նպաստավոր ջերմաստիճանի պայմաններում, դառնում է օրգանական նյութով լճերի և ջրամբարների աղտոտվածության լրացուցիչ աղբյուր, որի քայքայման պրոցեսում գրանցվում է թթվածնային պայմանների վատացում, և խախտվում է էկոհամակարգի բնականոն վիճակը: 2018թ-ից Սևանա լճում արձանագրվեց ջրիմուռների բուռն աճ. լիճը «ծաղկեց» *Anabaena* ցեղի կապտականաչ ջրիմուռներով: «Ծաղկման» երևույթները շարունակվեցին նաև հաջորդ տարիներին:

«Ծաղկման» երևույթների դեմ պայքարելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության պետական կոմիտեի աջակցությամբ 2020թ-ից սկսվել են «Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմների հետազոտում, «ծաղկման» երևույթների բացահայտում և վերջինիս դեմ պայքարի մեթոդների մշակում» նպատակային ծրագրի աշխատանքները, որին մասնակցում են ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի, ինչպես նաև «Բիոմիներալ» ՍՊԸ-ի աշխատակիցները: Ծրագրի գիտական ղեկավարն է կենսաբանական գիտությունների դոկտոր Բարդուխ Գաբրիելյանը:

«Ֆիտոպլանկտոնային համակեցության մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ Սևանա լճում «ծաղկում» առաջացնում է հիմնականում *Dolichospermum/Anabaena flos-aquae* տեսակի ցիանոբակտերիան: Լիճքի դիտակետի նմուշներում հայտնաբերվել են նաև *Anabaena flos-aquae* տեսակի հետերոցիստներ, որոնց քանակը մեկ լիտրում հավասարվել է մոտ 500000 բջջի: Ակտիվացված ցեղիտներով ջրի մաքրում իրականացնելուց հետո լճի ջրում *Anabaena flos-aquae* տեսակի ջրիմուռների բջջիներ կամ հետերոցիստներ չեն հայտնաբերվել», - ասաց ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնի գիտական ղեկավար, կենսաբանական գիտությունների դոկտոր Բարդուխ Գաբրիելյանը:

Լճի ջրի գենաթունային և կանցերոգեն հատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «ծաղկման» շրջանում լճի ջրում նկատվում է գենետիկական ազդեցության մակարդակի զգալի աճ, գրանցվում է ամենաբարձր ռեցեսիվ մուտացիաների հաճախականություն, իսկ «ծաղկման» շրջանից հետո գենետիկական ազդեցության մակարդակը զգալիորեն նվազում է: Գիտնականներն օգտագործել են գենետիկական տեստ մարկերներ ցեղիտի մաքրման արդյունավետությունը գնահատելու համար: Ցեղիտով մշակված ջրի նմուշներում նկատվել է ուսումնասիրվող գենետիկական թեստ-մարկերների մակարդակի նվազում՝ չմշակված տարբերակների համեմատ:

ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հետ համատեղ կիրառվել են *Tradescantia* (clon 02) բույսի երկու թեստ համակարգեր, ինչի արդյունքում ստացված տվյալները վկայում են, որ Սևանա լճի «ծաղկման» ժամանակ ցեղիտի օգտագործումը որպես բնական սորբենտ նպատակահարմար է լճի ջրի թունավորման մակարդակի նվազեցման համար:

Ծրագրի շրջանակներում ստեղծվել է լճի ջուրը ցիանոբակտորիաներից մաքրելու մոդելային սարք, որի նախագիծը մշակվել է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնի աշխատակիցների կողմից: Գիտնականների խումբը Սևանա լճում փորձարկել է Սևանի ջուրը կապտականաչ ջրիմուռներից՝ ցիանոբակտերիաներից մաքրող մոդելային սարքը: Ցեոլիտների օգնությամբ մոդելային սարքի միջոցով Լիճքի հատվածում Սևանա լճից կլանվել են վնասակար միկրոօրգանիզմներ, միկրոջրիմուռներ, ցիանոբակտերիաներ: Փորձարկումն իրականացվել է 2022թ. հուլիսին՝ Սևանա լճի «ծաղկման» երևույթների դրսևորման ընթացքում:

Սարքի ստեղծման համար հիմք են ծառայել ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունները, որոնք կատարվել են Սևանա լճի Լճաշենի, Նորաշենի, Լիճքի լճախորշերում: Այստեղ գրանցվել էին լճի ջրի «ծաղկման» առավել ինտենսիվ երևույթներ: Հետազոտվել են Սևանա լճի ջրի «ծաղկման» մեխանիզմները, կատարվել է ֆիտոպլանկտոնի տեսակային կազմի որոշում, քանակական ցուցանիշների գնահատում, զարգացման օրինաչափությունների բացահայտում, ուսումնասիրվել են նաև վերոհիշյալ երևույթները պայմանավորող հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական գործոնները: Իրականացվել է միջավայրից միկրոօրգանիզմների, միկրոջրիմուռների, ցիանոբակտերիաների կլանման և հեռացման նպատակով նպատակային սորբենտի ընտրություն, վերջինիս ակտիվացում, ազդեցության արագության մեծացում, մանրէաբանական ցուցանիշների հիման վրա ջրի մաքրման արդյունավետության գնահատում: Կատարվել է լճի ջրի գենաթունային և կանցերոգեն հատկությունների գնահատում», - նշված է հաղորդագրությունում:

<https://hetq.am/hy/article/150636>

29.11.2022

Առաջնային նպատակ պետք է լինի աղբբեջանական անօրինական զինված տեղակայումները հեռացնելը հայկական տարածքներից. «Թաթոյան» հիմնադրամը փաստահավաք աշխատանք է իրականացրել

Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամի ներկայացուցիչները մի քանի օր առաջ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք, Գեղամաբակ, Վերին Շորժա և մի շարք այլ գյուղերում իրականացրել են փաստահավաք աշխատանքներ:

Արդյունքները ներկայում ամփոփվում են: Դրանք պատշաճ կերպով կվերլուծվեն և կուղարկվեն միջազգային կառույցներին, կներկայացվեն միջազգային հանդիպումների ժամանակ, կդառնան հասանելի ՀՀ Կառավարության և Խորհրդարանի կողմից օգտագործման համար:

Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամի դիրքորոշմամբ՝ առաջնային նպատակ պետք է լինի աղբբեջանական անօրինական զինված տեղակայումները հեռացնելը ոչ միայն Հայաստանի օկուպացված տարածքներից, այլ նաև 2020 թվականի պատերազմից հետո մեր գյուղերի ու ճանապարհների մոտ գտնվող բոլոր վայրերից:

Դա հրատապ անհրաժեշտություն է՝ սահմանային բնակավայրերում մարդկանց բնականոն կյանքը, նրանց իրավունքներն ու անվտանգությունը վերականգնելու համար:

<https://azg.am/իրավունք/առաջնային-նպատակ-պետք-է-լինի-աղբբեջան/>

28.11.2022

Ղեկտեմբերի 15-ից մինչև հունվարի 20-ը հսկողության ուժեղացված միջոցառումներ կիրականացվեն Սևանա լճում

Սիգի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված 2022 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի հունվարի 20-ը հսկողության ուժեղացված միջոցառումներ կիրականացվեն Սևանա լճում և Հայաստանի ողջ տարածքում: Այս մասին հայտնում են Շրջակա միջավայրի նախարարությունից:

«Այսօր Շրջակա միջավայրի նախարարությունում նախարար Հակոբ Միմիդյանի գլխավորությամբ, նախարարի տեղակալներ Արամ Մեյմարյանի և Տիգրան Գաբրիելյանի, «Սևան» ազգային պարկի, ՀՀ Ոստիկանության, Գեղարքունիքի մարզպետարանի, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվել է ընդլայնված խորհրդակցություն՝ քննարկելու Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումների և փոխգործակցության ծրագրի իրականացման ընթացքը:

Հիշեցնենք, որ 2022 թվականի համար սիգի արդյունագործական որսի ընդհանուր չափաքանակ էր սահմանվել 600 տոննա, որից որսվել է 554.86 տոննա (548604 կգ) սիգ:

Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 20-ը ներառյալ: Սևանա լճում խիստ արգելը կիրառվի դեկտեմբերի 15-ից հունվարի 20-ը:

Վերահսկողության համատեղ միջոցառումների շրջանակում գերատեսչությունների ներկայացուցիչները համատեղ իրականացնելու են հանդիպումներ Սևանա լճի հարակից բնակավայրերի ղեկավարների, ձկնորսների և քաղաքացիների հետ:

Բացատրական աշխատանքներ են տարվելու միջոցառման նպատակի ու իրականացվելիք գործողությունների վերաբերյալ, որն է՝ արգելել Սևանա լճում սիգի որսը՝ ձկնատեսակի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված: Այս համատեքստում «Սևան» ազգային պարկի տարածքից դուրս են բերվելու լողամիջոցներ, որսագործիքներ և ձկնորսների ժամանակավոր կացարաններ:

Արգելվելու է բոլոր տեսակի որսագործիքների և լողամիջոցների մուտքը Սևանա լիճ: Սևանա լիճը գոտևորող բոլոր անտառային ճանապարհների վրա սահմանվելու է խիստ վերահսկողություն, մարզից դուրս եկող հիմնական ճանապարհների ելքերի մոտ տեղակայվելու են հսկիչ կետեր (Սևան-Երևան՝ ՃՈ հենակետ, Սևան-Դիլիջան թունել, Սևան-Վարդենիս՝ Ճամբարակի խաչմերուկ, Մարտունի-Սելիմի լեռնանցք, Գեղամավան-Վարսեր խաչմերուկ):

«Սևան» ազգային պարկի տարածքում սահմանվելու է շուրջօրյա հերթապահություն», - ասվում է հաղորդագրությունում:

<https://www.panorama.am/am/news/2022/11/28/սիգ-Սևան/2761913>

28.11.2022

«Անուվախով ապրում ենք, որ ժամին աղբբեջանցիների քեֆը տալիս է, կրակում են». Կուլթի բնակիչ

2022 թվականի սեպտեմբերի 13-ին Աղբբեջանի սանձագերծած ագրեսիայի հետևանքով Գեղարքունիքի մարզի Կուլթ գյուղը լքած բնակիչները շուրջ 2 ամսվա բացակայությունից հետո վերադարձել են իրենց տները:

2022 թվականի սեպտեմբերի 13-ին Աղբբեջանի սանձագերծած ագրեսիայի հետևանքով Գեղարքունիքի մարզի Կուլթ գյուղը լքած բնակիչները շուրջ 2 ամսվա բացակայությունից հետո վերադարձել են իրենց տները

Կուլթեցի կնոջը հարցրեցինք, թե իրավիճակն ինչպե՞ս է գյուղում, արդյոք թշնամին նախկինի նման շարունակո՞ւմ է կրակոցներ արձակել:

«Իրավիճակից մի՛ խոսեք, ինչ եկել ենք գյուղ, երևի 2 օր է հանգիստ եղել: Թուրքերն էլի նույն տեղում նստած նայում են գյուղին: Ամեն օր կրակում են, որ ժամին իրենց քեֆը տալիս է, կրակում են, ուզում են ասեն՝ մենք էստեղ ենք, ձեզ լավ մի զգացեք: Հատկապես երեկոյան ժամը 9-ից հետո կրակոցներն ակտիվանում են, ահուվախով ապրում ենք: Չնայած էս իրավիճակին, ամբողջ գյուղի ժողովուրդը վերադարձել է, բացառությամբ մի երկու հոգու, նրանք էլ առողջական խնդիրներ ունեն, դե, սկոռին ուշ է հասնում, մինչև Վարդենիսից հասնի Կուլթ, մարդը կարող է մահանա:

Մի քանի օր առաջ ես վատացել էի, սկոռին կես ժամ ճանապարհ է եկել: Ասացին՝ գիտե՞ք ինչ, որ վատանում եք, ցերեկով վատացեք, գիշերով խի՞ եք վատանում, գիշերով մենք վախենում ենք գանք հասնենք ստեղ, կարող է՝ թուրքերը մեր վրա կրակեն: Հիմա պետք է նստենք, սպասենք, ցերեկը վատանանք, որ սկոռին վախենալով չգա...»:

Հիշեցնենք, որ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին թշնամու սանձագերծած ագրեսիայի **հետևանքով** հարյուրավոր զոհեր, վիրավորներ, գերեվարվածներ և անհետ կորածներ կան: Վիրավորների շրջանում նաև **քաղաքացիական անձինք** եղան, քանի որ աղբբեջանական զինված ուժերը կիրառելով ծանր զինտեխնիկա՝ թիրախավորել էր նաև խաղաղ բնակչությանը՝ կրակելով գյուղերի վրա:

Մարդիկ ուշ գիշերով հագիվ էին կարողացել **դուրս գալ** իրենց բնակավայրերից:

<https://168.am/2022/11/28/1803144.html>

28.11.2022

Ի՞նչ իրավիճակ է Սոթքում. ներկայացնում է վարչական ղեկավարը

Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայրում աղբբեջանական սեպտեմբերի ագրեսիայից հետո քաղաքացիական կյանքը վերականգնվում է:

Նշենք, որ Սոթքը աղբբեջանական ագրեսիայից ամենաշատ տուժած բնակավայրերից էր: **«Փաստինֆո»**-ի հետ զրույցում Սոթքի վարչական ղեկավար Սևակ Խաչատրյանը հայտնեց, որ այս օրերին գյուղում իրավիճակը հանգիստ է.

«Մեզ մոտ ամեն ինչ կարգին է, կրակոցներ հնարավոր է լինեն, բայց մեզ մոտ չեն լսվում», - վստահեցրեց նա:

Տարհանված բնակիչների մեծ մասն արդեն վերադարձել է գյուղ և շարունակում է իր առօրյա կյանքով ապրել: Մոթքի դպրոցը և մանկապարտեզը նույնպես նորմալ գործում են:

Թշնամու կրակոցների հետևանքով վնասվել էր գյուղի գազատար խողովակը և ողջ էլեկտրականությունը, որոնք, ինչպես Սևակ Խաչատրյանը հայտնեց, արդեն վերականգնվել են:

Մոթքի վարչական ղեկավարի փոխանցմամբ՝ թշնամու ագրեսիայից տուժած քաղաքացիներին գումարային փոխհատուցում է տրվել, որպեսզի նորոգեն իրենց բնակարանները.

«Ենթակառուցվածքները հենց հաջորդ օրը վերականգնվել են: Բնակարանների նորոգման գործընթացը դեռ ընթացքի մեջ է», -ասաց Սևակ Խաչատրյանը:

<https://www.pastinfo.am/hy/news/2022/11/28/rqr8sby59/1497206>

28.11.2022

Գեղարքունիքից տեղահանված բնակչության ավելի քան 90 տոկոսը վերադարձել է մշտական բնակության վայրեր. մարզպետ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչի ժամանակավոր պաշտոնակատար Ալմազ Բուրկուտովին եւ նրա գլխավորած պատվիրակության անդամներին:

Մարզպետը facebook-ի իր գրառման մեջ կշռել է. «Ինչպես հանդիպման սկզբում կշռեց ՄԱԿ ՓԳՀ-ի պատվիրակության ղեկավարը, հանդիպման հիմնական նպատակը ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի եւ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն էր եւ Գեղարքունիքի մարզպետարանի հետ ընթացիկ եւ հետագա համագործակցության հարցերի շուրջ քննարկումը, որոնք հիմնականում վերաբերում էին 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով տեղահանված բնակչության կարիքների գնահատմանն ու աջակցության ցուցաբերմանը:

Միաժամանակ Ալմազ Բուրկուտովը հետաքրքրվեց Գեղարքունիքի մարզում արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պատրաստվածության եւ պատասպարման, մարզի ազդարարման համակարգի գործունեության, տեղահանված բնակչության վերադարձի, նրանց տնտեսություններին պատճառված վնասների վերականգնման հետ կապված հարցերով:

Շնորհակալությունն հայտնելով ՄԱԿ-ՓԳՀ-ի պատվիրակությանը Գեղարքունիքի մարզում իրականացված կենսական ու բազմաբովանդակ մարդասիրական ծրագրերի իրականացման համար, տրամադրեցի անհրաժեշտ տեղեկատվություն եւ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ շարունակական համագործակցության մասին իմ պատրաստակամությունը հայտնեցի: Եւ այդ, որ մեր երախտագիտությունն ենք հայտնում ՄԱԿ ՓԳՀ-ին և ՄԱԿ-ի այլ կառույցներին՝ այդ դժվարին օրերին պատերազմական իրավիճակում հայտնված՝ մեր բնակչությանը պահանջված ու կարեւոր օժանդակություն ցուցաբերելու, հույս ու հավատ ներշնչելու և բոլոր հիմնահարցերը մշտական ուշադրության կենտրոնում պահելու համար:

Ադրբեջանի կողմից սեպտեմբերյան ագրեսիայի ձեռնարկման առաջին օրերից մինչ այժմ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ մեր համագործակցությունն ընթանում է անխափան և իրականացված ծրագրերն այդ համագործակցության շնորհիվ հասցեական են եւ արդյունավետ: Ինչ վերաբերում է սեպտեմբերի 13-14-ի դեպքերի հետեւանքով տեղահանված բնակչության՝ իրենց բնակավայրեր վերադառնալու հետ կապված խնդիրներին, տեղեկացրեցի, որ ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցների շնորհիվ՝ մոտ երկու ամիս է, ինչ սկսվել եւ շարունակվում է

հրետակոծությունից վնասված բնակարանների վերականգման գործընթացը, որի արդյունքում տեղահանված բնակչության ավելի քան 90 տոկոսը վերադարձել է մշտական բնակության վայրեր: Խոսքը 152 բնակարանների կամ շինությունների մասին է, որոնց սեփականատերերին տրվել են համապատասխան փոխհատուցումներ՝ վնասները վերականգնելու համար: Բնականաբար, այդ ընտանիքներն ունենեն նաեւ այլ կարիքներ ու աջակցության անհրաժեշտություն, որոնք կապված են ձմեռացման, գյուղատնտեսական աշխատանքների և շատ այլ խնդիրների հետ, ուստի ամեն մի ծրագիր, որն ուղղվելու է մեր սահմանամերձ բնակավայրերի բնակչության կարիքների եւ կենսական խնդիրների բավարարմանը, մեր կողմից ստանալու է պահանջված աջակցություն ու համագործակցություն՝ լինեն դրանք մարդասիրական, թե անվտանգությանը վերաբերող ծրագրեր:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության, հարցերի լայն շրջանակի բաց քննարկման եւ բավարար տեղեկատվության տրամադրման համար՝ Ալմազ Բուրկուտովն իր հերթին վստահեցրեց, որ իրենք մշտական կապի մեջ կլինեն Գեղարքունիքի մարզպետարանի պատասխանատուների հետ՝ ներդրվող մարդասիրական ծրագրերը հասցեական եւ արդյունավետ իրականացնելու նպատակով:

<https://news.am/arm/news/732297.html>

24.11.2022

Մաքենիսի դպրոցում դասապրոցեսը վերսկսել է. մի քանի օրից նոր մրցույթ է հայտարարվել. Ադամ Մխիթարյան

Մաքենիսի դրոցում դասադուլն այսօրվանից դադարեցվել է, դպրոցի նախկին տնօրենը հայտարարությամբ է հանդես եկել և հորդորել է ծնողներին, որպեսզի իրենց երեխաներին ուղղարկեն դպրոց: Դպրոցում այսօրվանից դասերը նորմալ հունով ընթանում են, մանկավարժներն այդ մի քանի օրվա բաց թողնված դասերը լրացնում են:

*Հիշեցնենք, որ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Մաքենիս գյուղի դպրոցում **մի քանի օր է դասադուլ էր**: Մարզպետարանն առանց պատճառաբանության մերժում էր դպրոցի նախկին տնօրենի, այժմ էլ տնօրենի միակ թեկնածու Ադամ Մխիթարյանի ներկայացրած զարգացման ծրագիրը, ով, ի դեպ, դպրոցում տնօրեն է եղել 16 տարի:*

Մաքենիսի դպրոցի նախկին տնօրենը **Yerkir.am**-ի հետ զրույցում նշեց, որ այնուամենայնիվ պայքարն ուժի մեջ է մնում. «Երևույթը ծնողների և աշխատակազմի կողմից արնդունելի է, սակայն երևույթի պատճառով չպետք է տուժեն երեխաները: Մարդիկ չեն հաշվտվում այն իրողության հետ, որ դրսից գալիս ու առանց հիմքի դեմ են քվեարկում և գնում», - ասաց ՀՅԴ-ական գործիչը:

Նշենք, որ շուրջ մեկ տարի է՝ Ադամ Մխիթարյանը հանդիսանում է տնօրենի միակ թեկնածուն և իր թեկնածությունը պաշտպանում են և՛ մանկավարժական խորհուրդը, և՛ ծնողխորհուրդը: Դպրոցում 14-րդ անգամ է մրցույթ եղել, քանի որ 13 մրցույթները տապալվել են՝ քվորում չլինելու պատճառով:

Երեկ մարզպետի մոտ քննարկում է եղել, որին մասնակցել են մանկավարժներն ու ծնողները: Մարզպետի կողմից առաջարկություններ են եղել ԺՊ-ի փոփոխության վերաբերյալ: Մարզպետը նաև նշել է, որ Ադամ Մխիթարյանի ծրագրի դրույթները պետք է փոփոխվեն:

Նախկին տնօրենը նշում է, որ կփոփոխի ծրագրի դրույթները, բայց միննույն ժամանակ չի հասկանում պատճառը. «Իրենք ինձ չեն տվել ծրագրի վերաբերյալ հարցեր, ես չեմ հասկանում ծրագրի փոփոխության հիմքում ինչն է: Ամսի 27-ին նորից մրցույթ է հայտարարվել, և ես կրկին մասնակցելու եմ մրցույթին»:

Դպրոցի դասվարը, որը դիմում էր գրել Ադամ Մխիթարյանի խնդրանքով և հորդորով հետ է վերցրել դիմումը, շարունակում է դասավանդել:

ՀՅԴ-ական գործիչը վստահեցնում է, որ իրենք պատրաստ են ընդհուպ մինչև անվճար ուսուցանեն երեխաներին, բայց չպետք է երեխաները տուժեն նման երևույթների պատճառով. «Մենք հորդորում ենք բոլորին, որ այս հարցին չնայեն քաղաքական տեսանկյունից, այլ նայեն մարդկային, հայրենասիրական, մարդասիրության տեսանկյունից: Հորդորում եմ նաև Մարդու իրավունքների պաշտպանին մեկ անգամ գոնե այցելի գյուղ և խոսի երեխաների իրավունքներից: Հարցը Մխիթարյան Ադամի խնդիրը չէ, հարցը երևույթն է, հանուն դրա ես պայքարելու եմ մինչև վերջ», - ասաց նա:

<https://yerkir.am/hy/article/2022/11/24/3423>

23.11.2022

Կուտականում թշնամին մեծաթիվ գորք ու մարտական տեխնիկա է կուտակել

Երեւանում կայանալիք ՀԱՊԿ զագաթնաժողովին զուգահեռ հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը լարվել է: Մասնավորապես, իրավիճակը լարված է հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում:

[MediaHub-ի](#) տեղեկություններով՝ ադրբեջանական կողմը մեծաթիվ գորք ու մարտական տեխնիկա է կուտակել Կուտականի նոր զբաղեցրած դիրքերում, իսկ Կուրթ գյուղի հատվածում Ադրբեջանի զինված ուժերն ընդլայնել է գնդակոծության ինտենսիվությունը:

[MediaHub-ի](#) հետ զրույցում Վարդենիս խոշորացված համայնքի ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանն ասաց, որ ադրբեջանցիները գրեթե ամեն օր են կրակում Կուրթի միջդիրքային հատվածում: Կուտականի հատվածում թշնամու գորքի կուտակումների եւ հնարավոր հարձակման մասին հարցին Շահնազարյանը հապաղեց պատասխանել, նշելով՝ «գերծ կմնամ»:

Ըստ էության, Շահնազարյանը չհերքեց տեղեկությունը: Կուտականում ադրբեջանական գորքի կուտակումների վերաբերյալ տեղեկության իսկությունը [MediaHub-ը](#) փորձեց ճշտել նաև Պաշտպանության նախարարության մամուլի խոսնակ Արամ Թորոսյանից: Վերջինս ասաց, որ հայկական զինված ուժերը աչալրջորեն իրականացնում են իրենց վստահված սահմանի պաշտպանությունը:

Այդուհանդերձ, Դավիթ Շահնազարյանը նշեց, որ սեպտեմբերյան մարտերից հետո ամեն օր ակտիվություն է նկատվում ադրբեջանական կողմում, թշնամին այրում է հայ գյուղացիների խոտհարքերը. «Սեպտեմբերյան մարտերից հետո ադրբեջանցիները ինտենսիվ հրետակոծությամբ այրել են Նորաբակի եւ Կուրթի խոտհարքերը», - հավելեց նա:

<https://mediahub.am/post/1ec9e8fd693148c4153c3201b2f42b69>

Հարկ եղած դեպքում կներգրավվեն նոր միջոցներ, որ տեղահանվածներն օր առաջ վերադառնան իրենց տները. Գեղարքունիքի մարզպետ

Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանի, Սոթք բնակավայրի ղեկավար Սեւակ Խաչատրյանի ուղեկցությամբ եւ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների հետ համատեղ դիտարկեցի 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին Ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով ավերված բնակարանների վերականգնման գործընթացը Սոթք բնակավայրում: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

Նա նաեւ նշել է. «Անձամբ այցելեցի երկու տասնյակից ավել վերականգնված կամ վերականգնման փուլում գտնվող բնակարաններ, զրուցեցի բնակիչների հետ, տեղում ծանոթացա շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ եկած հիմնախնդիրներին եւ սովեցի համապատասխան հանձնարարականներ:

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչը ներկայացրեց այն վերականգնողական աշխատանքները, որոնք իրականացվել ու դեռեւս ընթանում են հիմնադրամի կողմից տրամադրված միջոցներով:

Այցից հետո նույն թեմայի շուրջ խորհրդակցություն անցկացրի Վարդենիսի համայնքապետարանում՝ տալով անհրաժեշտ ցուցումներ եւ հանձնարարականներ: Նշեցի, որ արդեն մեկ ամիս է, ինչ ընթանում է հրետակոծությունից տուժած բնակարանների վերականգնման գործընթացը, որի արդյունքները գոհացուցիչ են գնահատում: Շատ բան արվել է թեւեւ, գույքագրված բոլոր բնակարանների վերականգնման համար գումար տրամադրվել է, աշխատանքները դեռեւս ընթանում են, սակայն շինարարության ժամանակ նոր խնդիրներ են ի հայտ գալիս, որոնց պարագայում ամեն կերպ փորձում ենք օգնել տուժած ընտանիքներին:

Սոթքի ավերված բնակարանների վերանորոգման գործընթացում տեսանելի ու նշանակալի աշխատանք է իրականացրել «Տաշիր» բարեգործական հիմնադրամը, եւ մեր այցի հիմնական նպատակներից մեկն էլ այն է, որ «Տաշիր»-ի հետ հստակեցնենք ու փոխլրացնենք մեր համագործակցության շրջանակները, բնակարանների վերականգնման գործընթացը դարձնենք ավելի արդյունավետ ու նպատակասլաց, աշխատանքները ավարտի հասցնենք սեղմ ժամկետներում, որպեսզի ադրբեջանական ագրեսիայից տուժած ընտանիքները ձմեռը կարողանան դիմավորել վերականգնված, որոշակիորեն ավելի բարեկարգ դարձած բնակարաններում:

Այցի նպատակներից մեկն էլ այն է, որ պետության կողմից հատկացված յուրաքանչյուր միջոց ծախսվի արդյունավետ եւ հասցեական, ի հայտ եկած ամեն ինչի պնակի տեղում եւ ստանա իր լուծումը: Հարկ եղած դեպքում մեր կողմից կներգրավվեն նոր միջոցներ, որպեսզի մեր սահմանամերձ բնակավայրերից տեղահանված բնակիչները օր առաջ վերադառնան իրենց տներ ու անցնեն բնականոն կյանքի:

<https://news.am/arm/news/731252.html>

Մաքենիսի դպրոցում մի քանի օր է դասադուլ է. մարզպետարանը մեկ տարի է չի հաստատում ՀՅԴ-ական գործչի ներկայացրած դպրոցի զարգացման ծրագիրը

Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Մաքենիս գյուղի դպրոցում **մի քանի օր է դասադուլ է**: Մարզպետարանն առանց պատճառաբանության մերժում է դպրոցի նախկին տնօրենի, այժմ էլ տնօրենի միակ թեկնածու Ադամ Մխիթարյանի ներկայացրած զարգացման ծրագիրը, ով, ի դեպ, դպրոցում տնօրեն է եղել 16 տարի:

Շուրջ մեկ տարի է՝ Ադամ Մխիթարյանը հանդիսանում է տնօրենի միակ թեկնածուն և իր թեկնածությունը պաշտպանում են և՛ մանկավարժական խորհուրդը, և՛ ծնողխորհուրդը:

Վաղը դպրոցում 14-րդ անգամ է մրցույթ լինելու, քանի որ 13 մրցույթները տապալվել են՝ քվորում չլինելու պատճառով:

Պարզվում է դպրոցի կառավարման խորհուրդի 9 հոգուց բաղկացած կազմից 4-ը խնամի-ծանոց-բարեկամ են և ծնողներին հետաքրիիր է, թե ինչպես են մի ընտանիքի անդամները դառնում մի դպրոցի կառավարման խորհուրդի անդամներ ու իրենց թելադրող անձը մի քանի օր առաջ պաշտոն է ստանում՝ դառնալով Վարդենիսի փոխադաշտպետ:

Yerkir.am-ի հետ զրույցում դպրոցի տնօրենի միակ թեկնածու, ՀՅԴ-ական Ադամ Մխիթարյանը նշեց, որ արդեն իսկ ակնհայտ է, որ սա ուղղորդված է. «Պետք է քվեով հավանության տան դպրոցի զարգացման ծրագրին, երբ հարցում եմ, որ մասը իրատեսական չէ, որ դեմ եք քվեարկում, քար լռություն է տիրում, կամ իր անուն գրել չիմացողը զարգացման ծրագիր քննարկո՞ղ է: Իրենք ընդամենը գործիք են Մաքենիսի դպրոցում տնօրենի ընտրությունները չկայանալու համար, կամ կայանալուց հետո՝ դեմ քվեարկելու համար: Ակնհայտ է, որ սա քաղաքական նկատառումներ ունի, քանի որ ես ՀՅԴ անդամ եմ, միգուցե դա է, որ չեն ուզում, որ այստեղ մրցույթը կայանա», - նշեց նախկին տնօրենը:

Պարզվում է խնդիրն այն է, որ հանրակրթական ծրագրում փոփոխություն է, եղել և հունվարից հետո դպրոցի տնօրենի պաշտոնը նշանակովի է դառնալու: Իշխանությունն ամեն կերպ անում է, որպեսզի սահմանամերձ գյուղում իր թեկնածուն ունենա, նշանակի ժամանակավոր պաշտոնակատար, հետո՝ տնօրեն:

ՀՅԴ-ական գործիչը նշում է, որ շատերին են դիմել ԺՊ դառնալու համար, ընդ որում այնպիսի մարդկանց, ովքեր քրեական գործերով են անցնում. «Դիմել են մի քանիսին, բայց նրանք հրաժարվել են: Իրենք անում են այնպես, որ ես էլ լքեմ գյուղը, ի՞նչ են ուզում էս գյուղից, ի՞նչ են կորցրել ու ի՞նչ են ման գալիս: Եթե ես տիկնոջս վերցրեցի, դուրս եկա գյուղից, ո՞վ է նրանց տառուտուցում անելու, կինս միակ դասվարն է, նրան փոխարինող չկա»:

Նախկին տնօրենը նշում է, որ ուսման որակը գյուղում շատ բարձր է: Չնայած նրան, որ անցյալ տարի ունեցել են 8 շրջանավարտ, բայց նրանցից 4-ը ընդունվել են բարձրագույն հաստատություններ, ու գյուղում կրկնուսույցի հնարավորություն չկա: Այդ որակը ապահովում են 70 հազար դրամ աշխատավարձ ստացող ուսուցիչները:

Դպրոցի նախկին տնօրենը 44-օրյա պատերազմի կամավոր մասնակից է, սեպտեմբերի 13-ի ումբակոծության ժամանակ էլ ջոկատ է կազմել գյուղից, որպեսզի դուրս գա՝ հայրենիքը պաշտպանելու:

Դպրոցում այժմ էլ դասադուրը շարունակվում է, քանի որ ծնողներն իրնց նախաձեռնությամբ նամակներ են ուղղարկել նախարարություն և մարզպետարան, և խնդրել են, որպեսզի մարզպետն անձամբ գա գյուղ և քննարկի այս հարցը ծնողների հետ, իսկ մարզպետը չի եկել:

«Ծնողներն իրենց նամակում գրել էին, որ դիմելու են ծայրահեղ քայլերի և հինգշաբթի օրվանից երեխաներին դպրոց չեն ուղղարկում և նշում են չեն թողնի դպրոց գալ, մինչև այս հարցը լուծում չստանա: Ծնողները սպասում են վաղվա իրադարձությունների զարգացմանը, հետագա քայլերի մասին հասկանալու համար, իսկ մրցույթից ակնկալիք չունենք, քանի որ սրանց մրցույթն ու ուսումը չի հետաքրքրում, միայն հետաքրքրում է, որ ամեն տեղ կարողանան իրենց արմատները խրեն: Իրենց իսկ ասած ժողովրդավարությունը արդեն իսկ փուչիկ է դառնում, սա մի այլ կարգի բռնապետություն է: Իսկ ես ոչինչ չունեմ կորցնելու, ես արտագաղթող տեսակ չեմ, ես պայքարելու եմ մինչև վերջ», - նշեց Ադամ Մխիթարյանը:

<https://yerkir.am/hy/article/2022/11/21/3237>

21.11.2022

«Գյուղատնտեսական աշխատանքները 20 տոկոս ենք արել. 150 հեկտարի փոխարեն՝ հազիվ կարողացել ենք ցանել 30 հեկտարը». Վերին Շորժայի գյուղապետ

Նոյեմբերի 20-ին՝ ժամը 21:00-ին, Ադրբեջանի ՉՈւ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի արևելյան հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Հայկական կողմը կորուստներ չունի:

Նոյեմբերի 21-ի՝ ժամը 09:00-ի դրությամբ իրադրությունն առաջնագծում հարաբերականորեն կայուն է: Սահմանին տիրող իրավիճակի մասին տեղեկությունը **հայտնել է** Պաշտպանության նախարարությունը:

168.am-ի հետ զրույցում **Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի ղեկավար Արսյոմ Երանոսյանն** ասաց, որ կրակոցների ձայները գյուղում չեն լսվել, բայց գիտեն, որ թշնամին մշտապես կրակում է:

Թեպետ վերջին շրջանում թշնամին կրակում է հայկական դիրքերի ուղղությամբ, և կրակոցները գյուղին չեն հասնում, սակայն սեպտեմբերի 13-ի ագրեսիայից հետո գյուղացիները չեն կարող գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնել:

«Գյուղատնտեսական աշխատանքները կիսով չափ ենք կատարել, կիսով չափ էլ չէ, 20 տոկոսով: Աշնան ցանքս չենք կարողացել անել, մարդիկ իրենց հացի համար չեն կարողացել ցորեն ցանել, հույս էլ չկա, որ կանեն, չնայած՝ էլ երբ անեն, ցանքսի համար շատ ուշ է: Բացի այդ, մեխանիզատորը վախենում է բաց դաշտ դուրս գալուց. թշնամին կրակում է:

Անձամբ ես վարելահողեր ունեմ, ցորեն պետք է ցանվի, 150 հեկտարի փոխարեն՝ հազիվ կարողացել եմ ցանել 30 հեկտարը: Կանգել եմ տրակտորիստի կողքին, համոզել եմ, մարդն իմ խաթեր համար իրեն վտանգել ու այդքան բան արել է:

Գարնան աշխատանքների համար հողը պետք է վարելիք, դա էլ չենք արել: Բա այդքան հող ունենաս ու 30 հեկտար ցանե՞ս», - նշեց Արսյոմ Երանոսյանը:

Թե ինչպե՞ս են գյուղացիներն ապրելու, Վերին Շորժայի գյուղապետը պատասխանեց՝ բնակիչները կարող են մեկը մյուսով ապրել, այս պահին իրենց համար կարևորն անվտանգության ապահովումն է:

«Եթե այդ անվտանգությունը լինի, ապա իրենք նորից կարող են ստեղծել, ոչինչ, մի քիչ էլ թող պակաս լինի», - նշեց Արտյոմ Երանոսյանը:

Թե ի՞նչ կանի պետությունն այն բնակիչների համար, որոնք չեն կարողանում մշակել իրենց հողատարածքները՝ սոցիալական խնդիրներ լուծելու համար, Արտյոմ Երանոսյանը տեղյակ չէ: Նա նշեց, որ մինչև այսօր այդ մասին որևէ խոսակցություն չի եղել:

<https://168.am/2022/11/21/1799492.html>

20.11.2022

Գեղարքունիքի և Շիրակի մարզերից 100 նպաստառու ընտանիք կստանա սննդի աջակցության քարտեր (վիդեո)

Գեղարքունիքի և Շիրակի մարզերից 100 նպաստառու ընտանիք կստանա սննդի աջակցության քարտեր: Այս մասին [NEWS.am](https://news.am)-ը տեղեկանում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից:

Ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից, այս պահին փորձնական կիրառության փուլում է:

<https://news.am/arm/news/731155.html>

16.11.2022

ԱՄՆ դեսպանատունը բարձրացրել է Հայաստանում գտնվելու վտանգի մակարդակը

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը երկրում գտնվելու վտանգի մակարդակը բարձրացրել է մինչև 2-րդ մակարդակ եւ իր քաղաքացիներին խորհուրդ չի տալիս այցելել Լեռնային Ղարաբաղ , ինչպես նաեւ Տավուշի եւ Գեղարքունիքի սահմանամերձ շրջաններ:

<https://yerkir.am/hy/article/2022/11/16/3050>

15.11.2022

«Հանուն մեծ սիրո»... սեպտեմբերին թշնամու հարձակումից զոհված լեյտենանտի կինը ինքնասպանության դիմեց

Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքում երեկ հուղարկավորեցին սեպտեմբերի 13-ին թշնամու վերջին լայնածավալ հարձակումից զոհված լեյտենանտ, դասակի հրամանատար Արմեն Կարապետյանի կնոջը՝ Լիլիթին: Նրանք ամուսնացել էին այս տարվա հունվարին:

Արծվանիստ վարչական շրջանի ղեկավար Ռուբիկ Սիրականյանը Aravot.am-ին պատմեց, որ սեպտեմբերի 13-ին, արձակուրդում գտնվող Արմեն Կարապետյանին գիշերը զանգել ու հայտնել են, թե տազնապ կա: Նա շատ արագ, առանց մտածելու հասել է Սոթքի զորամաս, որտեղ ծառայում էր, բայց նույնիսկ չի հասցրել զորամաս մտնել, ճանապարհին զոհվել է ԱԹՄ-ի հարվածից:

Արմենի կինը՝ 23 ամյա Լիլիթ Հարությունյանը գյուղի դպրոցում էր աշխատում, ուսուցչուհի էր, ամուսնու զոհվելու լուրից այդպես էլ չսթափվեց: Ամուսնու հուղարկավորման օրը Լիլիթը դիմել է ինքնասպանության առաջին փորձին՝ մեծ քանակի դեղահաբեր օգտագործելով, բայց այդ անգամ հաջողվեց նրա կյանքը փրկել:

«Հանուն մեծ սիրո, հանուն նվիրվածության նման քայլի գնաց: Արտակարգ գիտակից, մակարդակով ընտանիքի տղա էր Արմենը, նրա կինը՝ նմանապես: Այսօր Արմենի ու Լիլիթի նշանադրության օրն է», - ասաց Ռուբիկ Սիրականյանը:

<https://www.aravot.am/2022/11/15/1304718/?fbclid=IwAR3LckRRPDt1XnbWW6a-7qifQnzOqjw9Euuf5jyh2LikSIkPQSGJLg13cn4>

15.11.2022

Գեղարքունիքի մարզի Մարտունու ծննդատանը լույս աշխարհ է եկել Երկիր մոլորակի 8 միլիարդերորդ մարդը

ԳԱՎԱՌ, 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գեղարքունիքի մարզի Մարտունու ծննդատանը, համաձայն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից հաստատված եւ հրապարակված տվյալների, լույս աշխարհ է եկել Երկիր մոլորակի 8 միլիարդերորդ մարդը:

Ինչպես [«Արմենպրես»](#)-ին տեղեկացրեց Գեղարքունիքի մարզի Մարտունու ծննդատան տնօրեն Արթուր Զովհաննիսյանը, աշխարհի 8 միլիարդերորդ մարդը համարվող նորածին Արփին՝ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի բնակիչներ Կարեն Չաքարյանի եւ Անի Քոչարյանի դուստրը, ծնվել է 2 կիլոգրամ 900 գրամ քաշով, 49 սանտիմետր հասակով, միանգամայն առողջ վիճակում:

Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի Ծովինար գյուղի վարչական ղեկավար Արայիկ Թարփոշյանի տեղեկացմամբ՝ արդեն աշխարհի 8 միլիարդերորդ բնակիչ համարվող Արփիի հայրը զբաղված է արտագնա աշխատանքով, իսկ մայրը տնային տնտեսուհի է: Արփին այս ընտանիքի երրորդ ու սպասված երեխան է: Առաջին երկու երեխաները տղաներ են:

<https://armenpress.am/arm/news/1097296/>

10.11.2022

Հայաստանը սահմանն ապառազմականացնելու առաջարկ է ներկայացրել Ադրբեջանին

ԵՐԵՎԱՆ, 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանը հայ-ադրբեջանական սահմանի ապառազմականացման առաջարկ է արել. հայկական կողմն առաջարկել է զորքերը հետ քաշել 1991 թվականին վերահաստատված սահմանից, սահմանի երկու կողմից ստեղծելով 3 կլիմետրանոց ապառազմականացված գոտի:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ ՀՀ կառավարության կիստի ընթացքում ունեցած ելույթում այս մասին ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Այդ առաջարկը շարունակում է մնալ ուժի մեջ, եւ մենք նախօրեին Ադրբեջանին ենք փոխանցել դրա նորացված տարբերակը: Ամեն դեպքում, պիտի արձանագրեմ, որ Ադրբեջանի զինված ուժերը պետք է դուրս բերվեն Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի բոլոր օկուպացված հատվածներից եւ մեր այս դիրքորոշումը երբեք ու որեւէ կերպ փոփոխության չի ենթարկվի», - ասաց ՀՀ վարչապետը:

Նրա խոսքով Ադրբեջանը փորձում է մտացածին պատճառներով հետահայաց կերպով արդարացնել Հայաստանի Հանրապետության նկատմամբ նախորդ տարվա մայիսին, Նոյեմբերին, 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ձեռնարկած ագրեսիան, տարածքների օկուպացիան, Հայաստանի ինքնիշխան տարածքում գտնվող 36 բնակավայրերի այդ թվում Գորիսի, Ջերմուկի, Վարդենիսի, Կապանի, Գեղամասարի հրետակոծությունը, 7600 քաղաքացիական անձանց, այդ թվում 1437 երեխաների, հաշմանդամություն ունեցող 99 անձանց տեղահանությունը, 193 բնակելի տների, 3 հյուրանոցների, 2 դպրոցների, մեկ բուժկենտրոնի թիրախավորումը, 211 հայաստանցիների, այդ թվում 3 քաղաքացիական անձանց սպանությունը, առնվազն 11 ռազմագերիների արտադատարանական մահապատիժները, այդ թվում՝ կին զինծառայողների մարմինների խոշտանգումներն ու անարգումը: Վարչապետն ընդգծեց, որ այդ ամենը արդարացում չի կարող ունենալ, եւ այս հանցանքների պատասխանատուներին պատասխանատվության կանչելու բոլոր կոչերը միանշանակ եւ աներկբա՝ արդարացի են:

<https://armenpress.am/arm/news/1096891/>

07.11.2022

Կան դիտորդներ, որոնք արձանագրել են, որ Ադրբեջանն ագրեսիա է իրականացրել Հայաստանի նկատմամբ. Գեղարքունիքի մարզպետ

Դիտորդական առաքելության ներկայացուցիչները պատճառներից մեկն է, որ հակառակորդը նվազեցրել է կրակոցները Գեղարքունիքի մարզի ուղղությամբ: Այս մասին այսօր՝ Նոյեմբերի 7-ին, լրագրողների հետ զրույցում ասաց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

«Իրենք ունեն մեկ շտաբ, բայց առաքելությունն իրականացնում են ամբողջ երկայնքով, որտեղ կատարվել է ագրեսիան: Առաքելությունը 8 հոգուց է բաղկացած: Իրենք զեկույց են ներկայացնելու, դիտորդների շարքում կան մարդիկ, որոնք արձանագրումներ են արել եւ վստահ են, որ Ադրբեջանն ագրեսիա է իրականացրել Հայաստանի տարածքի նկատմամբ եւ, որ տարածքներ է օկուպացրել Հայաստանից», - նշեց Սարգսյանը:

Մարզպետի խոսքով՝ տեղահանված ընտանիքների մեծ մասը վերադարձել են, չեն վերադարձել հիմնականում Կուտականի եւ Սոթքի բնակիչները, որոնց տները ագրեսիայի հետեւանքով շատ ծանր վնասներ են կրել:

«Սոթքում ունենք տներ, որոնք ամբողջությամբ փլուզված են եւ հնարավոր չէ ապրել, բայց իրենց համար տներ ենք վարձակալել, որ ապրեն այնտեղ մինչեւ տների վերականգնումը: 2021 թվականի մայիսից եղել են արոտավայրերի խնդիրներ: Եղել է, որ ֆերմերները հարկադրված մորթի են տարել իրենց անասուններին, բայց այս տարվա դրությամբ փաստագրված տվյալներ չկան: Սեպտեմբերից հետո եղել են ֆերմերային տնտեսություններ, որոնք ուզել են իրենց անասուններին վաճառել, բայց իրենց հետ ունեցել ենք հանդիպումներ, քննարկումներ: Այս պահին մարզում ֆերմերային տնտեսությունների քանակը չի պակասել», - ասաց Գեղարքունիքի մարզպետը:

<https://news.am/arm/news/728992.html>

02.11.2022

«Եթե ըստ նրա՝ այդ ամենը նորմալ է, թող մեկ անգամ գա ու կրակոցների տակ կանգնի». Վերին Շորժայի վարչական ղեկավարը՝ Վահան Քերոբյանին

Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը երեկ ԱԺ-ում լրագրողների հետ **ճեպագրույցում** անդրադարձել էր մասնավորապես Ջերմուկ տուրիստական քաղաքի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի սանձազերծած վերջին ագրեսիային և դրա ազդեցությանը տուրիզմի ոլորտի վրա: Նախարարն ասել է, որ պետք է ապրել՝ հաշվի առնելով այս նոր, իր ձևակերպմամբ՝ նորմալ իրավիճակը:

Լրագրողի հարցին՝ ամենօրյա կրակոցն իր համար դարձել է նորմալ, Էկոնոմիկայի նախարարը հարցով էր արձագանքել. «Իսկ ձեր համար չի՞ դարձել նորմալ բան: Կրակոցը նորմալ բան է նույնիսկ Իսրայելում, և այդ տնտեսությունը զարգանում է շատ բարձր տեմպերով, և եթե այդ կրակոցը պետք է չլինի մեր երկրի սուվերենության հաշվին, ապա մենք պետք է փորձենք այնպես անել, որպեսզի կրակոցների միջավայրում կարողանանք զարգացնել մեր տնտեսությունը և մեր երկիրն ավելի ապահով դարձնել»:

168.am-ի հետ զրույցում **Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի վարչական ղեկավար Արտյոմ Երանոսյանն** անդրադառնալով Վահան Քերոբյանի այս հայտարարությանը, նախ ծիծաղեց՝ նշելով, թե ուզում է հասկանալ, թե ինչպես կարելի է նորմալ ապրել կրակոցների տակ, այնուհետև հավելեց.

«Կրակոցները նորմալ են, կրակոցի տակ ապրել, աշխատելը նորմալ է: Հայրենասիրությունից ելնելով՝ հիմա այստեղ ենք ապրում, աշխատում, կրակոցների տակ ցանքս անում, բայց սա նորմալ է: Իհարկե, նորմալ մարդկանց համար այդ կրակոցներն աննորմալ են, բայց մենք հայրենասեր ենք, այստեղ ենք ապրում, աշխատում: Այլ խոսքով՝ մահն աչքներիս առաջ՝ գործ ենք անում, բայց դա չի նշանակում, որ նորմալ է», - նշեց Արտյոմ Երանոսյանը:

Ըստ Վերին Շորժայի վարչական ղեկավարի, եթե Վահան Քերոբյանը նման բան է ասում, ուրեմն՝ այդքան է հասկանում, այդքանն է ասում:

«Եթե ըստ նրա՝ այդ ամենը նորմալ է, թող մեկ անգամ գա ու կրակոցների տակ կանգնի, չեմ ասում՝ ապրի, եթե այդքան ռիսկ ունեն: Ես այդ մարդուն չեմ ճանաչում, մենք մեր գործին ենք՝ վարում ու ցանում ենք, առանց իրենց», - եզրափակեց Արտյոմ Երանոսյանը:

Հիշեցնենք՝ սեպտեմբերի 13-ին, ժամը 00:05-ի սահմաններում Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները, հրետանային միջոցների, ականանետերի ու ԱԹՄ-ների կիրառմամբ

ինտենսիվ կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի միանգամից մի քանի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Օրերս ԳՇ պետը հայտարարել էր, թե թշնամին մի քանի քվմ տարածք է օկուպացրել ՀՀ տարածքից. «Կան դիրքեր, որ հակառակորդը գտնվում է մեր պետական սահմանից հետո, կան դիրքեր, որ գտնվում է մեր պետական սահմանից առաջ: Այդպիսի ուղղությունները մի քանիսն են: Եվ նման հաշվարկների դեպքում առաջանում են մակերեսային տարբերություններ՝ 127, 129, 130, 132», - ասել է Ասրյանը:

<https://168.am/2022/11/02/1790259.html>

01.11.2022

ՊՆ-ի 71 անշարժ գույք կվաճառվի, այդ թվում՝ զորամասերի շենքեր

Պետական գույքի կառավարման կոմիտեն շուտով կավարտի Պաշտպանության նախարարությանը պատկանող 71 առանձին գույքի հանձնում-ընդունումը, որից հետո կգրադվի դրա օտարման հարցով: Ցանկում ներառվել են նաև Երևանում և մարզերում գտնվող զորամասերի շենքեր:

«Հետք»-ը տեղեկություն էր ստացել, որ այս ամիսներին Պաշտպանության նախարարությանը պատկանող՝ Երևանում և մարզերում գտնվող մի շարք զորամասերի շենքերը, հողատարածքները վաճառելու նպատակով բանակցություններ են ընթանում հավանական գնորդների հետ: Նույն տեղեկության համաձայն՝ գնորդներին ցույց են տալիս տարածքները, քննարկում օտարման պայմանները:

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ Առնակ Ավետիսյանին գրավոր խնդրեցինք պարզաբանել, թե ի՞նչ է տեղի ունենում՝ կցելով օտարման պատրաստվող մեզ հայտնի գույքերի ցանկը:

Ի պատասխան մեր հարցման, Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանը հայտնեց, որ Կառավարության այս տարվա ապրիլի 15-ի «496-Ա» որոշմամբ ՊՆ-ի հաշվեկշռում գտնվող մի շարք շենք-շինություններ պետք է ամրացվեն Պետական գույքի կառավարման կոմիտեին: Կոմիտեն գույքն ընդունելուց հետո պետք է Կառավարությանը ներկայացնի առաջարկություն դրանք օտարելու կամ այլ նպատակով տնօրինելու վերաբերյալ:

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալը, չհերքելով մեր ունեցած տեղեկությունները, նշել է. «Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վերը նշված որոշման համաձայն՝ Կոմիտեին արդեն իսկ հանձնվել է դրանց մի մասը, իսկ մյուս մասի նկատմամբ դեռևս իրականացվում են վերագրանցման և հանձնման-ընդունման աշխատանքներ: Միայն նշված աշխատանքների ավարտից հետո Կոմիտեի կողմից կքննարկվեն որոշման հավելվածում ներառված գույքը օտարելու կամ այլ նպատակով տնօրինելու հետ կապված խնդիրները, կհստակեցվի օտարվող գույքերի քանակը, օտարման եղանակը և այլն»:

Ուսումնասիրեցինք Կառավարության 2022 թ.-ի ապրիլի 15-ին ընդունած «496-Ա» որոշման ընդունման անհրաժեշտությունը: Պարզվում է, որ անշարժ գույքը, այդ թվում՝ չկառուցապատված հողամասերը, ներկայում չեն օգտագործվում: Դրանցից ոչ պրոֆիլային գույքերը ժամանակին հանձնվել են ՊՆ-ին՝ այն ենթադրությամբ, որ հետագա օտարումից մուտքերը կուղղվեն

նախարարության կարիքների բավարարմանը, ինչը, սակայն, չի իրագործվել: Որոշման հիմնավորումներում տեղ գտած այս պնդումը լրացուցիչ ստուգման կարիք ունի:

«Տարիներ շարունակ նշված գույքերի պահպանման համար նախարարության կողմից իրականացվել և իրականացվում են ծախսեր՝ պահակի վարձատրություն, էլեկտրաէներգիա և այլն, որոնք արդարացված չեն նախարարության բյուջեի տեսակետից: Միաժամանակ, պոտենցիալ ներդրողների կողմից պարբերաբար առաջարկներ են ներկայացվում նշված գույքերը վաճառելու կամ վարձակալության հանձնելու վերաբերյալ, որոնց նպատակահարմարության որոշման հարցը դուրս է ՊՆ-ի լիազորությունների շրջանակից:

Հաշվի առնելով պատերազմի արդյունքներով ՊՆ-ի նյութատեխնիկական մեծ կորուստները, և դրանց համալրման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելը, նախարարությունը նպատակահարմար է գտել նշված 71 անվանում գույքը շուկայական արժեքներով օտարելու և այդ միջոցներն ուղղելու նախարարության կարիքների բավարարմանը՝ հիմնականում ժամանակակից սպառազինության գնմանը», - նշված է հիմնավորման մեջ: Վերը նկարագրածն իրագործելու համար կառավարությունը որոշել է գույքը հանել ՊՆ-ի հաշվեկշռից, փոխանցել Պետական գույքի կառավարման կոմիտեին, որից հետո իրականացվի օտարումը, իսկ գումարով ՊՆ-ի կարիքների համար գնումներ կատարել:

Նշենք, որ օտարման նախապատրաստվող գույքերի ցանկում են Նուբարաշենի 2-րդ զինավանդ, Մուրացանի փողոցում գտնվող ՊՆ Բուժվարչության շենք-շինություններ, Արշակունյաց պողոտա 4/1 հասցում գտնվող 6.5 հա հողամասն իր շենք-շինություններով (Մայրաքաղաքային գունդը), Թալին քաղաքում գտնվող գորամասը, Աշտարակի զինավանդ, Գեղարքունիքի մարզի «Վահան-ուղեկալ» գորամասը և այլն:

<https://hetq.am/hy/article/149788>